

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» 01 2020 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝), ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի, որը գործում է ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Երկրաբանական գիտությունների ինստիտուտը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Լիթուսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 178 196 700 (մեկ հարյուր յոթանասունութ միլիոն հարյուր ինսունվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշումը և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, այդ թվում՝ նպատակը, օրացուցային պլանը, այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 Աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

2.4.13 Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 178 196 700 (մեկ հարյուր յոթանասունուր միլիոն հարյուր ինսունվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Սոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Սոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե

անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա ՈԱԿ
ք. Երևան, Բաղրամյան պող., 24
Հ/հ 900011024115,
ՀՎՀՀ 00005673
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24ա
Հ/հ 900018005422,
ՀՎՀՀ 00007498
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝

(ստորագրություն)


ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՍՅԱՆ



Տնօրեն՝

(ստորագրություն)

ԽԱՉԱՏՈՒՐ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ



Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

ԽԱՉԱՏՈՒՐ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

(անուն ազգանուն)

Հավելված N 1
« 20 » 01 2020 թ.
N 7-7 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 20 » 01 2020 թ. N 7-7 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 178 196 700 (մեկ հարյուր յոթանաստուներ ժիլիոն հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:


Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:


ՀՀ ԳԱԱ

Կազմակերպություն

Նախագահ՝

Տնօրեն՝


(նախագահություն)


(տնօրենություն)



ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Լիթուսիայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը» ընթացի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Տարածաշրջանի երկրադինամիկ զարգացման պատմության բացահայտում, երկրաբանական վտանգների գնահատում, օգտակար հանածոների առաջացման առանձնահատկությունների վերծանում, ջրային ռեսուրսների հետազոտություն և մոնիտորինգ, տեղեկատվական բազայի ստեղծում, արժեքավոր նյութի պահպանում, ցուցադրում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Տարածաշրջանի երկրադինամիկ զարգացման պատմության բացահայտում համալիր (նստվածքային, հնէաբանական, պետրոլոգիական և պետրոգրաֆիական, կառուցվածքային երկրաբանության և այլ) ուսումնասիրությունների հիման վրա: Ուսումնասիրությունները կուղեկցվեն դաշտային և լաբորատոր աշխատանքներով: Նոր բացարձակ և հարաբերական հասակների, ինչպես նաև ապարների տեսակների հիման վրա նախատեսվում է քարտեզների ու կտրվածքների կազմում և թարմացում: Աշխատանքները կիրականացվեն նաև տարբեր բնագավառներում արտասահմանյան գործընկերների հետ ստեղծված համագործակցությունների շրջանակներում: Արդյունքները կներկայացվեն տեղական և արտասահմանյան տարբեր գիտական պարբերականներում հոդվածների, ինչպես նաև՝ հաշվետվությունների տեսքով, կներկայացվեն զեկուցումներ գիտական միջոցառումների ժամանակ:

Կարևորագույն խնդիրներն են.

Տարածաշրջանի հրաբխականության վերաբերյալ առկա երկրաքիմիական և իզոտոպային տվյալների տարածաժամանակային անալիզ՝ մայրցամաքային կեղևի և քարոլորտի երկրաքիմիական և երկրաֆիզիկական տվյալների հարաբերակցությունը պարզաբանելու համար: Հայաստանի հրաբխային շրջաններում թույլ սեյսմիկության ուսումնասիրություններ՝ հանգամանակաբար օջախների մասին նախնական տվյալների ստուգումով համար:

Կշարունակվեն Հայաստանի հրաբուխների տեֆրայի ուսումնասիրությունները և Հայկական լեռնաշխարհի պիրոկլաստիկ գոյացումների երկրաքիմիայի վերաբերյալ տվյալների հենքի ստեղծման աշխատանքները:

Հայկական բարձրավանդակի էքսպլոզիվ հրաբխականության նոր և գրականությունում առկա երկրաժամանակագրական տվյալների ընդհանրացում՝ շրջանի էքսպլոզիվ ժայթքումների կրկնման հաճախականության գնահատման և հաշվարկի համար:

Նախատեսվում են նաև չորրորդական հրաբուխների, լիթոլոգիայի, ակտիվ տեկտոնիկայի, օգտակար հանածոների, երկրաբանական վտանգների դաշտային հետազոտություններ Իրանի Իսլամական Հանրապետության հետ մերձսահմանային մասերում՝ Իրանի Երկրաբանական ծառայության հետ ստորագրված հուշագրի շրջանակներում:

Մևանի ավազանի ցիանոբակտերիաների գործունեության արդյունքում ձևավորված նստվածքային նյութի, ինչպես նաև Հայաստանում և Արցախի Հանրապետությունում հոլոցենի յուս-պալեոբնահող, ՀՀ միոցեն-պլիոցեն հասակի պալեոլճային նստվածքների համալիր ուսումնասիրություններ պալեոմիջավայրի պայմանների վերականգնման համար:

Հարավային Հայաստանի պալեոգենի նստվածքային մերկացումների միներալապետրոգրաֆիական, հնէաբանական, կառուցվածքային ուսումնասիրություններ՝ պալեոմիջավայրի, պալեոկլիմայի վերականգնման, նստվածքային ավազանի երկրադինամիկայի և ածխաջրածինների կուտակման հնարավոր բարենպաստ կառույցների անջատման համար:

Երկրակեղևում ընթացող պրոցեսներով պայմանավորված երկրակառուցվածքային տարրերի ժամանակի մեջ զարգացումների և ժամանակակից երկրադինամիկ ակտիվության ուսումնասիրություն: Ակտիվ կառույցների առանձնացում: ՀՀ տարածքի երկրաշարժերի օջախային գոտիների սեյսմիկության վտանգի գնահատում:

Կարևորագույն խնդիրներից են լինելու ակտիվ խզվածքների, հատկապես չհետազոտված սեզմենտների համար ակտիվության բաղադրիչների, երկրաչափական առանձնահատկությունների, հնարավոր ակտիվացման հետքերի ուսումնասիրությունը, ինչպես նաև պատմական երկրաշարժերի տվյալների քննադատական վերլուծությունը և կատալոգի թարմացումը: Վտանգավոր երկրաբանական պրոցեսների՝ լանջային (սողանքներ, փլուզումներ), հողերի ջրիկացման և այլ վտանգավոր երկրաբանական երևույթների, նրանց փոխհարուցման և փոխկապակցվածությունների բացահայտում:

ՀՀ և Արցախի Հանրապետության տարածքների տարատեսակ (մագմատիկ, մետամորֆային, հրաբխանստվածքային, նստվածքային) և տարահասակ ապարների ուսումնասիրություն՝ դաշտային և լաբորատոր պայմաններում:

Կշարունակվեն էլեկտրահետախուզության փորձարարական հետազոտությունները լեռնային ապարների և հանքաքարի նմուշների էլեկտրական հատկությունների ուսումնասիրության համար:

ՀՀ տարածքի հայտնի հանքային դաշտերի սահմաններում թաքնված հանքայնացումների հայտնաբերման, տիպայնացման, նոր հեռանկարային տեղամասերի գնահատման, գործող արդյունաբերական հանքավայրերի ընդլայնման, տեխնածին հանքավայրերի ուսումնասիրություններ:

ՀՀ տարածքում տարբեր ծագումնաբանական խմբերին պատկանող ջրերի կազմի/որակի ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրում և պարզաբանում, որակի կառավարման խնդիրների տեսական հիմքի մշակում: Բնական և անտրոպոգեն ազդեցությունների ներգործության արդյունքում ջրերի կազմերի և որակի փոփոխությունների գնահատում և կանխատեսում: ՀՀ-ում գործող նորմերին օգտագործվող խմելու քաղցրահամ ջրերի որակի համապատասխանության և տարբեր ջրերի վրա շրջակա միջավայրի ազդեցության գնահատում:

Սևանա լճի ավազանի էկոհամակարգի վիճակի գնահատում և բնական ռեսուրսների հաշվառում՝ պահպանման ու «թվային կառավարման» մոդելի մշակմամբ:

Արբանյակային (MODIS, Sentinel, Landsat և այլ), վերգետնյա մոնիտորինգի, դաշտային հետազոտությունների տվյալների համադրմամբ ՀՀ ջրային ռեսուրսների առկա վիճակի գնահատում, կարճաժամկետ և միջնաժամկետ փոփոխությունների դինամիկայի կանխատեսման մոդելի մշակում:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններ՝ ՀՀ-ում ինֆրակառույցների պլանավորման և զարգացման համար, ԱՏՀ մոդելավորման եղանակով: Լոռվա մարզի օգտագործվող տարածքների երկրաբանական (արմատական ապարներ), փոխը գոյացումների, օրոգրաֆիկ և ջրազրական ցանցի և վտանգների անձնագրի հիմքի ստեղծում:

Երկրաբանական անցյալում կենդանական աշխարհի մասսայական անհետացումներով պայմանավորված բրածո մնացորդների էվոլյուցիոն զարգացման օրինաչափությունների բացահայտում, ոչնչացման պատճառների, պալեոմիջավայրի, նստվածքակուտակման առանձնահատկությունների վերհանմամբ:

Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Հրաբխագիտության լաբորատորիա

Հիմնական նպատակներից մեկը Ar-Ar մեթոդով Հայաստանի հրաբուխների հասակագրումն է միջազգային համագործակցության շրջանակներում: Տարածաշրջանի հրաբխականության վերաբերյալ առկա երկրաքիմիական և իզոտոպային տվյալների տարածաժամանակային

անալիզը հնարավորություն կտա հետազոտել տարածաշրջանի մայրցամաքային կեղևի և քարոլորտի երկրաքիմիական և երկրաֆիզիկական տվյալների հարաբերակցությունը: Չորրորդական հրաբուխների շրջաններում թույլ սեյսմիկության ուսումնասիրությունը թույլ կտա ճշգրտել հանգած մագմատիկ օջախների առկայության մասին նախնական տվյալների հավաստիության աստիճանը:

Հայկական բարձրավանդակի էքսպլոզիվ հրաբխականության երկրաժամանակագրական տվյալների ընդհանրացման հիման վրա հնարավոր կդառնա ժայթքումների կրկնման հաճախականության գնահատումը և հաշվարկի իրականացումը:

Լիթոլոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիա

ՀՀ պլիոցեն-չորրորդական պալեոլճերի նստվածքների ուսումնասիրություններ, դրանց ծագումնաբանությունը (ներառյալ հրաբխային), նստվածքագոյացման կառուցվածքային առանձնահատկությունները, դեֆորմացիաները (այդ թվում՝ սեյսմածին), առկա բրածո ողնաշարավորները, դիատոմները, ծաղկափոշին, համադրված լիթոշերտագրական ուսումնասիրություններով թույլ կտան մանրամասն մեկնաբանել անցյալի գործընթացները՝ շրջակա միջավայրի պայմաններով և կլիմայական փոփոխություններով:

Կշարունակվեն ՀՀ և ԱՀ տարածքներում չորրորդական հասակի, որպես շրջակա միջավայրի և կլիմայական պայմանների բացահայտման բացառիկ պահոցների՝ լյուս-պալեոբնահող նստվածքների համալիր ուսումնասիրությունները:

Պալեոգենի նստվածքային ավազանի երկրաբանակառուցվածքային, լիթոհնէաբանական, երկրախրոնոլոգիայի, իզոտոպային քիմիա-շերտագրության և տեկտոնական առանձնահատկությունների ուսումնասիրությունները կօգնեն ավելի լավ պատկերացնել այս ժամանակահատվածում կլիմայական կտրուկ փոփոխությունները, տարածքի երկրադինամիկ առանձնահատկությունները:

Գեոդինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիա

Հիմնական ուսումնասիրությունների նպատակները վերաբերում են ՀՀ և շրջակա տարածքի երկրադինամիկ զարգացումներին և վտանգավոր երկրաբանական երևույթներին: Ուսումնասիրությունները ներառում են լայնածավալ համալիր, ներառելով ակտիվ տեկտոնիկայի, պալեոսեյսմալոգիայի, արխեոսեյսմալոգիայի, սեյսմատեկտոնիկայի առանձին խնդիրներ: Այս ամենը նպատակ ունի հետազոտելու սեյսմիկ վտանգ ներկայացնող ակտիվ խզվածքները, բնութագրել նրանց երկրաչափությունը (սեզմենտավորումը), կինեմատիկան, վարքը (սեյսմիկ, ասեյսմիկ, շարժման արագությունները, երկրաշարժերի պարբերական ակտիվության առանձնահատկությունները և այլն), գնահատել սեյսմիկ վտանգի ներուժը (առավելագույն մագնիտուդաները և կրկնելիությունը): Ուսումնասիրությունը ներառում է նաև երկրաշարժերի

հարուցման մեխանիզմով առաջացող երկրորդային այնպիսի երևույթներ, որոնցից ամենավտանգավորներն են սողանքները, փլուզումները և հողերի ջրիկացումները:

Բոլոր զարգացած երկրներում ինժեներային երկրաբանությունը ենթակառուցվածքների զարգացման հիմքն է: Քաղաքաշինությունը, ճանապարհաշինությունը, ջրամբարների և այլ օբյեկտների շինարարությունը անմիջականորեն կախված են տարածքների ինժեներաերկրաբանական պայմաններից և ճշգրիտ օգտագործման հրահանգներից: Վտանգավոր լանջային պրոցեսների (ինչպիսիք են սողանքները՝ Թումանյանի, Հովքի, Այրումի և այլ և հեղեղումները՝ Խնձորուտ, Լեռնամերձ և այլ) կանխման և կանխատեսման համար, ներառյալ նաև ճանապարհաշինության և ջրամբարաշինության նախագծերը, ինժեներաերկրաբանական շրջանացման հարցը դառնում է խիստ արդիական, ինչին առնչվող հետազոտություններ կիրականացվեն 2020թ.:

Պետրոլոգիայի և իզոտոպային երկրաբանության լաբորատորիա

Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքների տարահասակ և տարատեսակ (մագմատիկ, մետամորֆային ու հրաբխանստվածքային) ապարների ուսումնասիրություններ լոկալ (Փոքր կովկասյան) և ռեգիոնալ (Ալպ-Հիմալայան լեռնաձալքավոր գոտու) երկրաբանական-երկրադինամիկ զարգացման պատմության ուսումնասիրությունների արդիականության համատեքստում:

Հիմնական նպատակը նշված ապարների կազմի, ծագումնաբանության, հասակի ու երկրաբանական էվոլյուցիայի խնդիրների պարզաբանումն է՝ հնարավորության դեպքում ժամանակակից անալիտիկ մեթոդների ու նորագույն տեսական մեթոդաբանության կիրառմամբ:

Ծրագրի իրականացման ուղիները և նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կատարողների առկայությունը մնում են խիստ սահմանափակ: Մասնավորապես, այս կամ այն խնդրի լուծումը սեփական միջոցներով և առկա անալիտիկ սարքավորումների պայմաններում վաղուց դարձել է անհնար: Ուստի, նորագույն անալիտիկ տվյալների հայթայթման միակ ելքը շարունակում է մնալ արտասահմանյան գիտահետազոտական լաբորատորիաների հետ սերտ համագործակցությունը:

Հետազոտության փուլերը բաժանվում են երկու մասի՝ դաշտային և լաբորատոր (կամերալ) աշխատանքներ: Դաշտային աշխատանքներում կարևորվում են տարբեր տեսակի ու ծագման ապարների ֆացիալ կազմերը, դրանց փոփոխություններն ու տարբեր ֆացիաների միջև փոխհարաբերությունների բնույթը: Կամերալ մասը բաղկացած է երեք հիմնական ճյուղերից, որոնք համապատասխանում են հետազոտությունների միներալապետրոգրաֆիական, երկրաքիմիական ու երկրաժամանակագրական (ըստ հնարավորության՝ Rb-Sr, Ap-Ap, U-Pb) մեթոդներին:

Օգտակար հանածոների լաբորատորիա

ՀՀ տարածքի հայտնի հանքային դաշտերի սահմաններում տարվելու են թաքնված հանքայնացումների հայտնաբերման, տիպայնացման, նոր հեռանկարային տեղամասերի գնահատման, գործող արդյունաբերական հանքավայրերի ընդլայնման, տեխնածին հանքավայրերի ուսումնասիրման, շրջակա միջավայրի պահպանության և գնահատման աշխատանքներ: Իրականացվելու են երկրաքիմիական, կառուցվածքային-երկրաբանական ուսումնասիրություններ հանքային դաշտերի սահմաններում ոսկի-սուլֆիդային, պղինձ-մոլիբդենային և բազմամետաղային հանքայնացումների էլեմենտ-ինդիկատորների որոշման, ֆորմացիոն պատկանելիության ճշգրտման, հողմնահարման մակարդակի, հանքաբերության գնահատման, հանքվերահսկող կառույցների վերհանման նպատակով: Կատարվելու է հանքավայրերի և հանքերակումների ծագումնաբանական առանձնահատկությունների՝ հասակի, մասշտաբայնության, հանքային մարմինների, հանքուղեկից փոփոխությունների, հանքային բակտերիաների և ֆլուիդ ներփակումների նորովի վերլուծություն և գնահատում:

Հիդրոերկրաքիմիայի լաբորատորիա

Հիմնական ուղղությունները ՀՀ տարածքում տարբեր ծագումնաբանական խմբերին պատկանող ջրերի կազմի ձևավորման պայմանների պարզաբանումն է, որակի վրա շրջակա միջավայրի ազդեցության գնահատումը, որակի կառավարման խնդիրները: Կշարունակվեն ՀՀ տարածքի ջրերի հետազոտությունները, ինչի նպատակը և արդիականությունը տարբեր նպատակներով օգտագործվող ջրերի կազմի ձևավորման պայմանների, կազմի փոփոխությունների վրա տարբեր, այդ թվում՝ անտրոպոգեն, օրեցօր մեծացող ազդեցությունների պարզաբանումն է և նրա գնահատումը, օգտագործվող ջրերի որակի փոփոխությունների կանխատեսումը, այդ ջրերի կազմի ձևավորման առանձնահատկությունների և օրինաչափությունների, տարբեր ջրերի օգտագործման համապատասխանությունը նորմերին, նրանց օգտագործման վերաբերյալ հանձնարարականների պատրաստումը:

Ծրագրի իրականացումն ապահովվում է երկրաբանական, երկրաքիմիական և հիդրոերկրաքիմիական ժամանակակից և ավանդական մեթոդների կիրառմամբ:

Հնէաբանության և շերտագրության լաբորատորիա

Կարևոր նշանակություն ունեն ֆաներոզոյան էոնի տարբեր օրգանական խմբերի և բույսերի էվոլյուցիոն զարգացման օրինաչափությունների, կենսաբանական մահացումների բացահայտման հարցերը, օրգանիզմների բազմազանության հիմնահարցերը, կապը բնական միջավայրի, տարբեր երկրաբանական երևույթների, հնաէկոլոգիական և հնակլիմայական խնդիրների ուսումնասիրման հետ:

Կկատարվեն Հայաստանի միջին և վերին դևոնի, վերին դևոն-ստորին կարբոնի, պերմի և տրիասի շերտախմբերի ծավալների փոխհարաբերության և համադրման

ուսումնասիրություններ, հասակագրումը կիրականացվի կոնոդոտներով, բրախիոպոդներով և այլ միկրոֆաունայի բրածո օրգանիզմներով:

Գեոարխեոլոգիայի և գեոմոնիթորինգի լաբորատորիա

Նախատեսվող աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է բնական վտանգների ուսումնասիրությունների, ռիսկերի գնահատման և նրանց նվազեցման ու տնտեսության զարգացման համար անհրաժեշտ բազմաթիվ այլ գործոնների կարևորությամբ: Նպատակն է ստեղծել սեյսմիկ արագությունների հիմնավորված եռաչափ մոդելներ, ճշգրիտ որոշել Կովկաս-Կասպիական տարածաշրջանում երկրաշարժերի հիպոկենտրոնների տեղադիրքերը, Մեծ Կովկասի բարձրացման մեխանիզմները:

Երկրակեղևում P և S ալիքների արագությունների մանրամասն կառուցվածքի (2D, 3D մոդելներ) ստեղծում և նրանց բնականոն մարումների որոշում: Մոնիթորինգի սահմանի տեղագրության /ռելիեֆ/ ճշգրտում և վերին մանթիայում արագությունների գրադիենտի որոշում:

Երկրակեղևի լարվածադեֆորմացիոն դաշտի առանձնահատկությունների վերլուծություն երկրաշարժերի (ML \geq 3.0) ֆոկալ մեխանիզմների հաշվարկման և ֆոկալ մեխանիզմների նոր կատալոգի ստեղծման հիման վրա, մշտադիտարկման և ռեպեոլոգիայի (սեսիոն) գեոդինամիկ համընդհանուր տեղորոշիչ համակարգի (GPS) (ՀՏՀ) դիտակետերի նախագծում և տեղադրում, ՀՀ տարածքի գեոդինամիկ դաշտի մոնիթորինգ՝ մշտական և սեսիոն չափումների միջոցով, համընդհանուր տեղորոշիչ կայաններից տեղեկատվության կուտակում, վերլուծություն և քարտեզագրում, երկրակեղևի լարվածային ռեժիմների գնահատում, սեղմման և ընդարձակման դեֆորմացիաների ուղղությունների և արագությունների որոշում:

Երկրաբանական տեղեկատվական լաբորատորիա և գրադարան

Սևանա լիճը և դրա ջրհավաք ավազանը Հայաստանի համար ներկայացնում են տնտեսական, բնապահպանական, ռեկրեացիոն և մշակութային բացառիկ արժեք, ուստի դրա խնդիրների ուսումնասիրությունն ու ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումն ունեն կենսական նշանակություն Հայաստանի համար: Հետազոտության իրականացման ընթացքում կլուծվեն հետևյալ խնդիրները. ջրային հաշվեկշռի տարրերի վերլուծություն, բնական վտանգների և ռիսկերի վերլուծություն ու մոդելավորում, գեոմորֆոմետրիական վերլուծություն, սոցիալ-տնտեսական խոցելիության գնահատում, պահպանվող տարածքների, լճի հիմնախնդիրների, ջրօգտագործման խնդիրների վերլուծություն և միջոցառումների առաջարկի կազմում, ՄՏՀ գործառույթների վրա հիմնված «թվային կառավարման» մոդելի մշակում:

ՀՀ ջրային ռեսուրսների առկա վիճակի գնահատման, կարճաժամկետ և միջնաժամկետ փոփոխությունների դինամիկայի կանխատեսման մոդելը թույլ կտա իրականացնել Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման հետ կապված խնդիրների համապարփակ


վերլուծություն և հիմք կհանդիսանա այդ խնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ գործողությունների պլանի մշակման համար, հաշվի առնելով նաև կանխատեսվող կլիմայական և ջրապահանջարկի փոփոխության հնարավոր սցենարները: Ծրագիրը կիրականացվի հետևյալ մեթոդներով. Առկա գրականության, հետազոտությունների արդյունքների, մոնիտորինգային և տարածական տվյալների հավաքագրում և կազմակերպում, դաշտային աշխատանքների իրականացում, մաթեմատիկական-վիճակագրական և ԱՏՀ ու հեռահար զոնդավորման մեթոդներով վերլուծությունների իրականացում, քարտեզագրում, արդյունքների տարածում և քննարկում:

Կազմակերպության
տնօրեն՝



(տնօրենություն)

Խաչատուր Մելիքսեթյան
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(տնօրենություն)

Խաչատուր Մելիքսեթյան
(անուն ազգանուն)



ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*


«Լիթուֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	Գրականության և ֆոնդային նյութերի մշակում	Ուսումնասիրվող նյութերի և օբյեկտների վերաբերյալ արխիվային տվյալների հավաքում	Ուսումնասիրման ենթակա նյութերի և օբյեկտների վերաբերյալ գրադարանային և արխիվային նյութերի հավաքում և մշակում	Նախկինում ստացված տվյալների համեմատություն նորերի հետ, կորեյացիա, համընկնելիության աստիճանի պարզաբանում	01-05.2020	5 000.0
2.	Տեղային աշխատանքներ	Տեղային երկրաբանական աշխատանքներ, տեղային սարքավորումների տեղադրում, սպասարկում, պահպանություն	Ապարների, հանքանյութերի, ջրերի, հողերի նմուշարկում, երկրաբանական երթուղիներ, կտրվածքների կազմում,	Անհրաժեշտ նյութի հավաքում, եղած տվյալների ճշգրտում, կտրվածքների և մերկացումների գնահատում, դաշտային սարքավորումների տվյալների հավաքագրում	05-11. 2020	35 000.0
3.	Անալիտիկ հետազոտություններ	Հավաքված նյութի նյութական կազմի որոշումներ, լաբ. սարքավորումների սպասարկում,	Հիմնական էլեմենտների կազմի, սպեկտրոմետրիկ, հիդրոքիմիական և այլ հետազոտություններ, շլիֆների պատրաստում	Հետազոտվող նյութերի կազմերի, պարզաբանում, համեմատական անալիզ,	11-12.2020	26 000
4.	Ստացված նյութի մշակում	Տվյալների ստուգում, դասակարգում, մուտքագրում համակարգիչ	Համակարգչային աշխատանքներ, տվյալների նախնական	Տվյալների բազաների, մոդելների կազմման և նախնական	12.2020	74 196.7

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել ենամսյակային փուլերով

			խմբավորում և դասակարգում	ստուգման աշխատանքներ		
5.	Հողվածներ, տարեկան հաշվետվություն	Ստացված արդյունքների հրատարակում, զեկուցումներ, հաշվետվություն	Ստացված արդյունքների հրատարակում, զեկուցումներ, հաշվետվություն	Չեկուցումներ, հողվածներ, տարեկան հաշվետվություն	12.2020	38 000
Ընդամենը						178 196. 7

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Խաչատուր Մելիքեթյան
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

Խաչատուր Մելիքեթյան
(անուն ազգանուն)


ՆԱԽԱՀԱՇԻՎ

**«Լիթուսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը» ծրագրի
 (ծրագրի անվանումը)**

հազար դրամ


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	152 311.7	30 462.3	38 077.9	38 077.9	45 693.6
2	տնտեսական և այլ ծախսեր*	25 885.0	5 177.0	6 471.3	6 471.3	7 765.4
ԸՆԴԱՄԵՆԸ		178 196.7	35 639.3	44 549.2	44 549.2	53 459.0

Կազմակերպության տնօրեն՝



 (ստորագրություն)

Խաչատուր Մելիքեթյան
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Մարգարիտա Կարմուխյան
 (անուն ազգանուն)



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †


Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	12 530.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	4 800.0
	գազի ծառայություն	4 800.0
	ջրամատակարարման ծառայություն	520.0
	կապի և համակարգչային ծառայություններ	2 210.0
	ադրահանություն	200.0
2	Գույք	500.0
3	Սարքեր և սարքավորումներ	2 000.0
4	Նյութեր	2 700.0
5	Գործուղումներ	3 000.0
6	Հրատարակման ծախսեր	100.0
7	Շենքի և այլ ՀՄ սպասարկում, պահպանում	3 500.0
8	Այլ ծախսեր	1 555.0
Ընդամենը		25 885.0

Կազմակերպության տնօրեն՝ [Ստորագրություն]
 (ստորագրություն)

Խաչատուր Մելիքսեթյան
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ [Ստորագրություն]
 (ստորագրություն)

Սարգսիստա Կարմուխյան
 (անուն ազգանուն)



* Բուներում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լիթուսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը» ծրագրի


Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտա-կան աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1.	Մելիքսեթյան Խաչատուր Բորիսի	տնօրեն	զ/դ	225,000
2.	Ջրբաշյան Ռուբեն Տիգրանի	տնօրենի խորհրդական, ԳԱԱ բաժ. ակադ.-քարտ. տեղակալ	ակադ.	277,300
3.	Բաբայան Հեկտոր Երվանդի	տնօրենի խորհրմիջ.կապ/զ	զ/թ	90,000
4.	Մկրտչյան Ռուդոլֆ Սարգսի	տնօրենի խորհր.միջ.կ/զծով		90,000
5.	Շահազիզյան Սարգիս Լևոնի	տնօրենի խորհրդատու գեոէկոլոգ.զծով		90,000
6.	Սահակյան Լիլիթ Հրանտի	տնօրենի տեղ. զ/զծով	զ/թ	195,000
7.	Հովսեփյան Լիլիթ Հմայակի	տնօրենի տեղ.տնտ.տ/զ		195,000
8.	Շահինյան Հրայր Վարդանի	գիտ.քարտուղար	զ/թ	175,000
9.	Միսակյան Մարինե Գագիկի	տնօրենի օգն.միջ.կ/զծով		100,000
10.	Կարմուխյան Սարգարիտտա Ալեքսանդրի	գլխ.հաշվապահ		190,000
11.	Հարությունյան Անահիտ Տիգրանի	տնտեսագետ		93,000
12.	Ավետիսյան Գոհար Քյարամի	հաշվապահ		90,000
13.	Մամաջանյան Կարինե Սուրիկի	հաշվապահ-գանձապահ		130,000
14.	Գրիգորյան Սուսաննա Նիկոլայի	տեսուչ կադրերի զծով		110,000
15.	Հովհաննիսյան Լիլիթ Զավենի	գրաս.վարիչ,տնօր.օգն.-քարտուղար.		100,000
16.	Հովհաննիսյան Նինա Էդուարդի	հատուկ բաժնի տեսուչ		45,500
17.	Շահինյան Արաքսյա Հրայրայի	օպերատոր-թարգմանիչ		51,000
18.	Խոնդկարյան Նարինե Արտաշեսի	թարգմանիչ-դասավանդող		90,000
19.	Դալյաքյան Հասմիկ Աշոտի	գնումների համակարգող		60,000
20.	Ավագյան Արա Վարուժանի	լաբորատորիայի վարիչ	զ/դ	120,000
21.	Խաչիյան Էդուարդ Եփրեմի	գլխավոր գիտ.աշխատող	ակադ.	90,000
22.	Աղամալյան Վիլեն Արշավիրի	առաջատար գիտ.աշխատող	զ/դ	90,000
23.	Առաքելյան Դմիտրի Գեղամի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	90,000
24.	Հարությունյան Ռուբեն Ալեքսանդրի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	90,000
25.	Էզնաթոսյան Նաիրա Մելսիկի	կրտսեր գիտ.աշխատող	զ/թ	90,000
26.	Մարտիրոսյան Միկեղ Պավելի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
27.	Աթալյան Թաթուլ Պերճի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
28.	Ալավերդյան Գագիկ Հայկի	առաջ.ճարտարագետ		90,000
29.	Ավագյան Մեղա Աշոտի	ճարտարագետ		93,000
30.	Գևորգյան Միքայել Ռադիկի	լաբորատորիայի վարիչ	զ/թ	120,000
31.	Բաղդասարյան Հայկ Ռաֆայելի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	90,000
32.	Թոգլաքյան Պետրոս Վաղարշակի	առաջատար գիտ.աշխատող	զ/թ	90,000
33.	Սարգսյան Լիլիթ Մամվելի	գիտ.աշխատող,խմբի/ղեկ.	զ/թ	110,000

34.	Իգիթյան Հայկ Ալբերտի	գիտ.աշխատող	զ/թ	93,000
35.	Մակարյան Խաչատուր Վարդանի	կրտսեր գիտ.աշխատող	զ/թ	93,000
36.	Բալասանյան Սերգեյ Վլադիմիրի	կրտսեր գիտ.աշխատող	զ/թ	93,000
37.	Հովհաննիսյան Գոհար Ողիսևսի	գիտ.աշխատող		90,000
38.	Առաքելյան Սուրեն Ռաֆայելի	կրտսեր գիտ.աշխատող		90,000
39.	Սահակյան Էլյա Էմիլի	կրտսեր գիտ.աշխատող	զ/թ	93,000
40.	Պողոսյան Անի Մենիկի	կրտսեր գիտ.աշխատող		47,000
41.	Դեմիրճյան Հովնաթան Մանուկի	ճարտարագետ-երկրաբան		47,000
42.	Աբգարյան Նատալյա Ժանի	ճարտարագետ		45,500
43.	Աբգարյան Ելենա Ժանի	ճարտարագետ		90,000
44.	Լևոնյան Արա Ֆելիքսի	ճարտարագետ-էլեկտրիկ		90,000
45.	Թադևոսյան Արամայիս Հարությունի	հսկիչ		47,000
46.	Նիզոյան Քրիստինե Համագասպի	հսկիչ		47,000
47.	Թունյան Սանասար Բենիամինի	հսկիչ		45,500
48.	Մելիքյան Գայանե Արտավազդի	հսկիչ		45,500
49.	Մխիթարյան Մխիթար Գնելի	հսկիչ		47,000
50.	Աղասյան Միլվա Սուրենի	հսկիչ		45,500
51.	Հովհաննիսյան Արշավիր Եղիազարի	լաբորատորիայի վարիչ	զ/թ	120,000
52.	Մուրադյան Կարապետ Մուրադի	առաջատար գիտ.աշխատող	զ/դ	90,000
53.	Զոհրաբյան Սերգեյ Արտավազդի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	45,500
54.	Հարությունյան Մարիաննա Արտավազդի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	90,000
55.	Սիրզոյան Հենրիկ Գերասիմի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	45,500
56.	Հարությունյան Լևոն Վարդանի	գիտ.աշխատող	զ/թ	47,000
57.	Համբարձումյան Վահագն Հովիկի	կրտսեր գիտ.աշխատող		47,000
58.	Սիրադեղյան Վարդուհի Վարդանի	ճարտարագետ-երկրաբան		47,000
59.	Հայրապետյան Աիդա Եփրեմի	ճարտարագետ-երկրաբան		47,000
60.	Գալոյան Ղազար Լևոնի	լաբորատորիայի վարիչ	զ/թ	120,000
61.	Մելքոնյան Ռաֆիկ Լևոնի	գլխավոր գիտ.աշխատող	թղթ.անդամ	135,000
62.	Մաթևոսյան Արշակ Կարլենի	առաջատար գիտ.աշխատող	զ/դ	90,000
63.	Ղուկասյան Ռաֆիկ Խաչիկի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	45,500
64.	Խոբեղյան Ռիմմա Հարությունի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	45,500
65.	Աթայան Լուսինե Մարոյի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
66.	Ամիրադյան Սոնա Վոլոդյայի	ճարտարագետ-երկրաբան		93,000
67.	Ավոյան Մարինե Սկրտիչի	ճարտարագետ-քիմիկոս		45,500
68.	Գաբրիելյան Նինա Հակոբի	օպերատոր		47,000
69.	Գրիգորյան Արայիկ Գևորգի	լաբորատորիայի վարիչ	զ/թ	120,000
70.	Հայրապետյան Ֆլորա Արտաշեսի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	90,000
71.	Մելիք-Աղամյան Հայկ Հուսիկի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	90,000
72.	Ավագյան Նունե Աշոտի	ճարտարագետ-երկրաբան		93,000
73.	Սերոբյան Վահրամ Վահագնի	ճարտարագետ-երկրաբան		93,000
74.	Ստեփանյան Ժանետա Հովհաննեսի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	90,000
75.	Վարդանյան Սարգիս Սաշիկի	գիտ.աշխատող	զ/թ	93,000
76.	Հովակիմյան Հայկ Գագիկի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
77.	Հայրապետյան Արեգնագ Ռաֆիկի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
78.	Գրիգորյան Տարոն Եղիայի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
79.	Բաղասյան Ինգա Էգնատի	ճարտարագետ		93,000
80.	Սարգսյան Հերմինե Մարատի	ճարտարագետ-երկրաբան		93,000
81.	Սուքիասյան Աննա Հարությունի	ճարտարագետ-երկրաբան		93,000
82.	Գագուրյան Ռիմմա Հունանի	ճարտարագետ-քիմիկոս		45,500
83.	Ավանեսովա Լյուդմիլա Միքայելի	ճարտարագետ-քիմիկոս		45,500
84.	Սահակյան Քրիստինա Հրաչյաի	լաբորանտ		47,000
85.	Ղուկասյան Յուրա Գուրգենի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	90,000
86.	Ղույումջյան Հովհաննես Պողոսի	ավագ գիտ.աշխատող	զ/թ	45,500

87.	Նավասարդյան Գևորգ Խաչատուրի	ավագ գիտ.աշխատող	գ/թ	47,000
88.	Գևորգյան Լիլիթ Ալբերտի	գիտ.աշխատող		93,000
89.	Գևորգյան Հռիփսիմե Պարտիկի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
90.	Մանուչարյան Դավիթ Աշոտի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
91.	Գրիգորյան Էդմոնդ Սպարտակի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
92.	Անաստասյան Արմեն Ռուդիկի	ճարտարագետ-երկրաբան		90,000
93.	Տեր-Հակոբյան Վերգինե Պարզևի	հղկող, հավաքարար		136,300
94.	Մկրտչյան Ավետիս Արշալույսի	հղկող		45,500
95.	Զաքարյան Շուշանիկ Սաշիկի	ավագ գիտ.աշխատող	գ/թ	100,000
96.	Գյուլնազարյան Շուշան Արայի	ավագ գիտ.աշխատող	գ/թ	95,000
97.	Սաֆարյան Ռուզաննա Գագիկի	ճարտարագետ-երկրաբան		93,000
98.	Սահակով Արկադի Սարգսի	լաբորատորիայի վարիչ	գ/թ	120,000
99.	Մկրտչյան Ստելլա Վյաչեսլավի	գիտ.աշխատող	գ/թ	93,000
100.	Նազարյան Անուշ Վարդգեսի	ճարտարագետ-քիմիկոս		90,000
101.	Ապերյան Արաքսյա Ժորիկի	ճարտարագետ-քիմիկոս		90,000
102.	Գրիգորյան Օֆելյա Ադասի	ճարտարագետ-քիմիկոս		90,000
103.	Ավետիսյան Անահիտ Միշայի	ճարտարագետ-քիմիկոս		90,000
104.	Հովհաննիսյան Ասյա Հովսեփի	ճարտարագետ-սպեկտր.		45,500
105.	Թումանյան Արմինե Շավարշի	ճարտարագետ-սպեկտր.		50,000
106.	Առաքելյան Ալեքսանդր Անդրանիկի	լաբորատորիայի վարիչ	գ/թ	120,000
107.	Ավագյան Արշավիր Արամայիսի	առաջատար գիտ.աշխատող	գ/թ	90,000
108.	Նալբանդյան Մարինե Արմենի	ավագ գիտ.աշխատող	գ/թ	45,500
109.	Երիցյան Հայկ Հրանտի	գիտ.աշխատող		45,500
110.	Տարասյան Նարեկ Հմայակի	կրտսեր գիտ.աշխատող		93,000
111.	Սարգսյան Լիլիթ Ավետիքի	ճարտարագետ		93,000
112.	Ուլոյան Հարություն Ռազմիկի	ճարտարագետ		93,000
113.	Ներսիսյան Արաքսյա Հովհաննեսի	ճարտարագետ		93,000
114.	Գասպարյան Միրանուշ Ադամի	գրադարանի վարիչ		95,000
115.	Ներսիսյան Անժելիկա Գարուշի	գրադարանավար		93,000
116.	Ստեփանյան Կարինե Հովհաննեսի	ճարտարագետ		45,500
117.	Գրիգորյան Գայանե Ռաֆիկի	թանգարանի վարիչ		120,000
118.	Խովհազումի Գեորգի Պավելի	առաջատար գիտ.աշխատող	գ/դ	90,000
119.	Պողոսյան Նարինե Յուրիի	ճարտարագետ-երկրաբան		90,000
120.	Խովհազումի Նինա Աշոտի	ճարտարագետ-երկրաբան		45,500
121.	Դավթյան Ռուբեն Սմբատի	ճարտարագետ		93,000
122.	Սահակյան Նարեկ Ապրեսի	ճարտարագետ		93,000
123.	Պետրոսյան Ստելլա Ռուբենի	տեխնիկ		90,000
124.	Միսկարյան Գագիկ Սուրենի	պարետ-պահեստապետ		100,000
125.	Պողոսյան Սուրեն Հայկարամի	տնտեսավար		93,000
126.	Սարգսյան Գագիկ Գուրգենի	վարորդ, բանվոր		135,000
127.	Երիցյան Մարատ Նազարեթի	վարորդ		90,000
128.	Փալանջյան Հայրապետ Հովսեփի	վարորդ		90,000
129.	Լալայան Հարություն Պավիկի	հերթափոխային պահակ		103,400
130.	Գասպարյան Մարտին Բախշիի	հերթափոխային պահակ, բանվոր		148,900
131.	Մարտիրոսյան Նարինե Հմայակի	հերթափոխային պահակ, հավաքարար		163,400
132.	Բեդրոսյան Գլադիմիր Անդրեյի	հերթափոխային պահակ		103,400
133.	Կարապետյան Անահիտ Սեդրակի	հերթափոխային պահակ, հավաքարար		154,700
134.	Արզումանյան Էսֆիրա Միսակի	հսկիչ		45,500
135.	Դավթյան Արման Վաղլենի	հսկիչ		45,500
136.	Վերանյան Ռուզաննա Սեծիկի	հսկիչ		47,000

137.	Վարդանյան Լենդրուշ Արմենակի	հսկիչ	45,500
138.	Զանոյան Սվետլանա Ալբերտի	հավաքարար	60,000
139.	Զայանա Սվետլանա Խաչատուրի	հավաքարար	47,000
Ընդամենը 139			


Կազմակերպության
տնօրեն՝



(ստորագրություն)


Խաչատուր Մելիքսեթյան
(անուն ազգանուն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝



(ստորագրություն)

Սուսաննա Գրիգորյան
(անուն ազգանուն)



45,500
60,000
47,000